ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ, ՄՈՍԿՈՒԱ.

ՊԵՏ. ԽՈՐՀՐԴ. ԴԱՆԻԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 7-րորդ յօդուածի հիմամբ Լազարեան ճեմարանի Մասնագիտական Դասարանների Խորհուրդը իր՝ 1910 թ. Նոյեմբերի 5-ին կայացրած նիստում՝ վճռեց յայտարարել գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթը՝ երկու մրցանակի համար, մէկը՝ 1000 և միւսը 700 ռուբլի։

Ա. Ժողովածու [բացատրական առաջաբանով] ցայժմ ծանօթ բոլոր հին-հայկական արձանագրութիւնների՝ մինչև ԺԵ. դարը (Corpus inscriptionum Armenicarum), որոնք գտնւում են Ռուսաց Հայաստանի սահմաններում և հանուած են լուսանկարով և կամ խնամքով ընդօրինակուած իսկականից.— Նոյն նիւթի մասնակի կատարումը՝ այն է Ռուսաց Հայաստանի որևէ մի նշանաւոր և կամ մի քանի գաւառի արձանագրութիւնների լիակատար ժողովածուն կարող է պարգևատրուել նշանակած մրցանակի մի մասովը.

Բ. «Կանոնագիրք» կամ եկեղեցական ժողովների (Հայոց, երեք տիեզերական և վեց տեղական) որպէս և առաքելոց և ընդհանուր քրիստոնէական ու հայ եկեղեցւոյ հայրց կանոնների հայ բնագիրները.— Այդ բնագիրները պէտք է լինին արդիւնք հնագոյն և ընտրելագոյն գրչագիր օրինակների հետազօտութեան՝ տարբեր ընթերցուածքների ճիշտ և մանրամասն ցուցմամբ ևս և՝ որչափ հնար է, համեմատութեամբ՝ ուր հարկ լինի, յոյն և ասորի բնագիրների հետ.

Աշխատութիւնները կարող են ներկայացուել՝ հայերէն կամ ռուսերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն.

Լաւագոյն աշխատութիւնը յիշած ամեն մի նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից — առաջնի համար՝ 1000 ռուբլի (աւելի քան 2500 ֆրանք) և երկրոր-

դի համար՝ 700 ռուբլի (մօտ 1800 ֆրանք) մրցանակով։

Եթէ այս նիւթերից ոչ մէկի մասին ներկայացրած աշխատութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ։

Աշխատութիւնները պէտք է ներկայացուեն Լազարեան ճեմարան 1913 թ. Օգոստոսի 1-ից ոչ ուշ։

Վերատեսուչ ճեմարանի՝ Վ.Ս. ՄԻԼԼԵՐ.
Քարտուղար Խորհրդի՝ Ա. ԽԱԽԱՆՈՎ.

13 Նոյեմբերի, 1910 թ.
Մոսկուա։

Այս 1911 թուին Արարատը կը հրատարակուի մանկավարժական ճոխ բաժնով։ Կաշխատակցեն—Pessimist, ճեմարանի մանկավարժութեան դասատու պ. Գ. Էդիլեանց, որոնց յօդուածները տպւում են արդէն յունվար ամսից սկսած, Օլթեցեան և ուրիշները։

Խնդրում ենք ուսուցիչներից և դպրոցական գործով հետաքրքրուողներից գրել յօդուածներ մեր դպրոցների թէ վարչական և թէ մանկավարժական երևոյթների մասին։ Ուսուցիչները, որոնք այնքան մօտ են ժողովրդին, կարող էին ազգագրական և տեղագրական հում նիւթեր կամ ուսումնասիրութիւններ տալ. այդպիսի յօդուածներն ևս ուրախութեամբ կը տպագրուեն, յօդուածագիրների ցանկութեան համեմատ, չափաւոր վարձատրութեամբ կամ վարձատրութեան փոխարէն յօդուածների արտատպութեամբ 4—600 օրինակ, որից 50 օրինակ դուրս գալով որպէս գրքաքննիչին, Մայր Աթոռիս տպարանին, դրատանը և զանազան հաստատութիւններին հասցնելու համար, մնացած օրինակներ կը յանձնուեն յօդուածագիրներին։

8 երեսից պակաս պատահական յօդուածները, թղթակցութիւնները, պատասխաններն ու ընդդիմախօսութիւնները չեն վարձատրուում։

Խմբ.